ՀՀ կրթության գիտության մշակույթի
և սպորտի նախարարության

<< Վանաձորի Գրիբոյեդովի
անվան N 11 ավագ դպրոց>>
ՊՈԱԿ

Республика Армения
Министерство образования науки культуры и спорта
<< Ванадзорская старшая шк N 11 им. Грибоедова >> ГНО

REPUBLIC OF ARMENIA

VANADZOR HIGH SCHOOL № 11
AFTER GRIBOEDOV
OF MINISTRY OF EDUCATION AND SCIENCE
NATIONAL NON-TRADING ORGANIZATION

< 05 >_____02_____2024թ

Կազմված է

Պատասխանատու ստորաբաժանման կողմից

«Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀՐԱՎԵՐ

«Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց>>ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգիչների սպասարկման նպատակով

Հարգելի մասնակից, Սերգեյ Գումրույան ԱՁ տնօրեն Ս.Գումրույան

Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու համակարգիչների սպասարկման նպատակով /Վ11ԱԴ -ՄԱԾՄ-2024/1 ընթացակարգին:

Հայտնում ենք,որ գնման ապրանքի վերաբերյալ Ձեր գնի առաջարկը համաձայն տեխնիկական բնութագրի անհրաժեշտ է ներկայացնել «Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց>>ՊՈԱԿ, ք.Վանաձոր,Ազատամարտիկների պլ հասցեով

Տնօրեն՝ Ն.Ա.Սահակյան

Համակարգիչների սպասարկման/ծրագրային/

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Վ11ԱԴ -ՄԱԾՄ-2024 /1

ք. Վանաձոր <<09....>>...02.....2024թ.

22 ԿԳՄՄՆ <<Վանաձորի Գրիբոյեդովի անվան N11 ավագ դպրոց>>ՊՈԱԿ- ի դեմս տնօրեն Ն.Ա.Սահակյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և Սերգեյ Գումրույան ԱՁ, ի դեմս ընկերության տնօրեն Ս.Գումրույանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված համակարգիչների ծրագրային սպասարկում (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ծառայություն է մատուցում Գնորդին:

2.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան :

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատուցելու դեպքում հրաժարվել Ծառայությունից.

3.1.2 Եթե մատուցվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարատավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով ձեռք է բերել Ծառայություն՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ծառայությունը այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայամանգիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցվել է անպատշաճ որակի Ծառայություն, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը,

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սուն պայմանագրին համապատասխան մատուցված ծառայության ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի Ծառայությունից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ծառայության որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ծառայության բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատուցած Ծառայությունը.

3.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատուցած Ծառայության համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.2 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

3.4.4 Պատշաճ ձևով կատարել սարքավորումների վերանորոգման աշխատանքները:

4.Ծառայության գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է մինչև------350000-----(-երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N 1 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա

5.Ծառայության որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ծառայության որակի համար:

6. Ծառայության հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ծառայության հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցած Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում մատուցած Ծառայության որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարած մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա

Գնորդ

ՀՀ ԿԳՄՍՆ <Վանաձորի Գրիբոյեդովի անվ. N11 ավագ դպրոց> ՊՈԱԿ,Ազատամարտիկների պ1

Կենտրոնական գանձապետարան

900238000534

ՀԿՀՀ06909818

էլ.փոստ: vanadzor11@mail.ru

Տնօրեն Ն.Վահակյան

Կ.Տ.

Վաճառող

Սերգեյ Գումրույան ԱՁ

ք.Վանաձոր, Տ.Սեծի 34

h/h 163138040650

Հայէկոնոմ բանկ

ՀԿՀՀ 67060939

Ս.Գումրույան

Կ.Տ.